

**Ուրվագիր երրորդ**  
**Աստծու ժողովրդի երկու չարիքները և**  
**Աստծու հավատարմությունն**  
**Իր տնտեսությունն իրազործելու առնչությամբ**

Գրվածքների ընթերցում. Երմ 2:13, Սղմ 36:8-9, Հվի 4:10, 14, 7:37-39, Ա Կրթ 10:4, 12:13

- I.** Երեմիա մարգարեի գիրքը, որ լի է Իսրայելի մեղքի և Աստծու բարկության, տույժերի և պատիժների մասին խոսքով, բացահայտում է, որ Աստված մտադիր է Իր տնտեսության մեջ լինելու կենդանի ջրերի ակունքը՝ սկզբնադրյուրը, որպեսզի Իրեն բաշխի Իր ընտրյալ մարդկանց մեջ նրանց բավարարվածության ու վայելքի համար՝ նպատակ ունենալով առաջացնելու եկեղեցին՝ Աստծու զույգին, որպես Աստծու մեծացումը, Աստծու ընդարձակումը, որպեսզի Աստծու արտահայտության համար այն լինի Նրա լեցունությունը. աստվածային հայտնության միջուկն այն է, որ Աստված մեզ այն նպատակի համար ստեղծեց ու փրկա- գնեց, որ Իրեն մեր մեջ ներդնի, որպեսզի լինի մեր կյանքն ու մեր ամեն ինչը՝ 2:13, Սղմ 36:8-9, Հվի 3:29-30, 4:10, 14, 7:37-39, Հյու 7:17, Եփս 3:16-19.
- Ա. Քրիստոսը՝ որպես կենդանի, հոգեոր վեմը, ճեղքվեց Աստծու օրենքի իշխանության կողմից, որպեսզի կյանքի ջուրը հարության մեջ կարողանա հնուել Նրանից և լցվել Նրա փրկա- գնած մարդկանց մեջ, որպեսզի նրանք խմեմ՝ Ել 17:6, Ա Կրթ 10:4:
- Բ. Հարության մեջ մեկ Հոգուց խմելով՝ մենք դառնում ենք Մարմնի անդամներ, կառուցվում որպես Մարմինը և պատրաստվում լինելու Քրիստոսի հարսը՝ 12:13, Հյու 22:17:
- II.** «**Իմ ժողովուրդը երկու չարիք գործեց. նրանք Ինձ՝ կյանքի ջրի Ակունքին, թողեցին, որպեսզի իրենց համար ջրամբարներ փորեն, կոտրված ջրամբարներ, որոնք ջուր չեն պահում»՝ Երմ 2:13.**
- Ա. Իսրայելը պետք է խմեր Աստծուց՝ որպես կենդանի ջրերի ակունքից, որպեսզի դառնար Նրա մեծացումը՝ որպես Նրա արտահայտությունը, բայց դրա փոխարեն երկու չարիք գործեց.
1. Թողեց Աստծուն՝ որպես իր ակունքի, իր սկզբնադրյուրի, և Աստծուց տարրեր սկզբնադրյուր դարձավ. այս երկու չարիքներն են Երեմիայի մարգարետության ամբողջ գրքի ուղեցույցը:
  2. Ջրամբարներ փորելը պատկերում է այն, որ Իսրայելն իր մարդկային տքնությամբ ճիզ էր թափում, որպեսզի Աստծուն փոխարինող մի բան (կուռքեր) սարքեր:
  3. Այն, որ ջրամբարները կոտրված էին և չէին կարող ջուր պահել, ցույց է տալիս, որ բացի մեր մեջ բաշխված Աստծուց՝ որպես կենդանի ջրից, ոչինչ չի կարող հագեցնել մեր ծարավն ու մեզ Աստծու արտահայտության համար դարձնել Աստծու մեծացումը՝ Հվի 4:13-14:
- Բ. Աստծու աշքին չարամիտ մարդը՝ չարազործը, նա է, ով չի զայխ Աստծուց խմելու (Եա 55:7). չարամիտների պիղծ վիճակն այն է, որ նրանք չեն զայխ Տիրոջ մոտ, որպեսզի ուտեն, խմեն ու վայելեն Տիրոջը. նրանք շատ բաներ

Են անում, բայց չեն գալիս Տիրոջ հետ շփվելու, Նրան ընդունելու, Նրան ստանալու, Նրան ճաշակելու և Նրան վայելելու. Աստծու աչքին սրանից ավելի չար բան չկա՝ 57:20-21, հմմտ 55:1-2:

- Գ. Աստված մտադիր էր Իրեն բաշխելու մարդու մեջ որպես մարդու բավարարվածությունը, որպեսզի Ինքն ընդարձակվի, բայց մարդը դարձավ անհավատարիմ ու անմաքուր և կուռքերի համար թողեց Աստծուն.
1. Մեր սրտի կուռքը (Եզկ 14:3) մեր ներսում այն ամենն է, ինչ ավելի շատ ենք սիրում և գնահատում, քան Տիրոջը, և ինչ փոխարինում է Տիրոջը մեր կյանքում (Ա Հվի 5:21).
    - ա. Ովքեր իրենց սրտում կուռքեր են հաստատում, իրենց կուռքերի միջոցով օտարանում են Տիրոջից (Եզկ 14:5):
    - բ. Բոլոր նրանք, ովքեր իրենց ներսում կուռքեր ունեն, սակայն արտաքուստ փնտրում են Աստծուն, չենք կարող գտնել Նրան (Խ. 3, հմմտ Երմ 29:13):
  2. Կուռքերի երկրպագելով՝ Իսրայելն իրեն դարձրեց ունայն, ոչինչ. նրանք այնքան կուռքեր ունեին, որ դրանց թիվը նրանց քաղաքների թվի համաձայն էր (2:5, 28, 11:13). Իսրայելն իր Աստծու իրականությունը, իր փառքը փոխել էր կուռքերի ունայնության հետ (2:11, Սղմ 106:20, Հոմ 1:23):
  3. Ուրացությունը կապված է Աստծու ճանապարհը թողնելու և մեկ այլ ճանապարհ բռնելու հետ, որի նպատակն Աստծուց տարբեր բաների հետևելն է. դա նշանակում է թողնել Աստծուն և դառնալ դեպի կուռքերը՝ Երմ 2:19:
  4. Երբ Իսրայելը գերեվարվեց բարեկոնացիների կողմից, Աստծու ժողովուրդը դեռևս չէր հրաժարվում իր կուռքերից և ստիպված դրանք իր հետ տարավ Քարելոն. ամեն մի բան, որ փոխարինում է Աստծուն կամ զբաղեցնում Աստծու տեղը, կուռք է, որ երկրպագողների համար դառնում է բեռ՝ Եսյ 46:1:
  5. Համբ, անձայն կուռքերը (Ա Կրք 12:2, Ամք 2:18-20) իրենց երկրպագուներին դարձնում են համբ և անձայն, բայց կենդանի Աստված Իր երկրպագուներին մղում է Իր Հոգու մեջ խոսելու (Ա Կրք 12:3թ, Սղմ 115:4-8, Բ Կրք 4:13, Սղմ 116:12-13).
    - ա. Աստծու ոչ մի երկրպագու չպետք է լուս լինի. բոլորը պետք է օգտագործեն իրենց ձայները՝ Աստծու Հոգու մեջ ասելու. «Հիսու՞ առ Տեր է»:
    - բ. Այս «Հիսու՞ առ Տեր է» ասելը բոլոր հոգեւոր շնորհների գլխավոր գործառույթն է. պատշաճ հոգով Տիրոջ անունը կանչելը Սուրբ Հոգուն մասնակցելու, վայելելու և փորձառարար ապրելու ճանապարհն է՝ Ա Կրք 12:3թ, հմմտ Հոմ 14:17:
    - գ. «Մեռելները Եհովային չեն փառաբանում, ոչ էլ որևէ մեկը, որ լրության մեջ է իջնում: Բայց մենք կօրինենք Եհովային իիմա և մինչև հավիտենություն: Ալելոյա»՝ Սղմ 115:17-18.
  6. Այն, ինչ ունենք և նոյնիսկ այն, ինչ մենք ենք, կարող է դառնալ կուռք. Իսրայելը չար էր և Աստծուն անհավատարիմ, քանի որ կուռքերի համար լրեց Աստծուն. Աստծու հանդեպ այսպիսի անհավատար-նության առնչությամբ մենք նույնն ենք, ինչ Իսրայելը:

### **III. Մենք պետք է տեսնենք Աստծու հավատարմությունն Իր տնտեսությունն իրագործելու առնչությամբ՝ հմմտ 37:3.**

Ա. Թեև մենք անհավատարիմ ենք, Աստված հավատարիմ է (Ողբ 3:23թ). մի շատ հայտնի օրիներգի (օրիներգ 15) կրկներգ ասում է. «Հավատարմությունն մեծ է, և օր-օրի Քո ողորմություններն են նորոգվում, Զեորդ հոգացել է ողջ կարիքներն իմ, Հավատարիմ ես, Հայր, ամեն բանում».

1. Մենք կարող ենք կա՞մ բնական, կա՞մ հոգևոր կերպով հասկանալու, թե Աստվածաշունչն ինչ է ասում և ինչ է ասում այս օրիներգն Աստծու հավատարմության մասին:
2. Եթե Աստծու հավատարմությունը բնական կերպով հասկանանք, գուցե կարծենք, թե Նա հավատարիմ է ուղղակիորեն նյութական մատակարարման կամ ֆիզիկական օրինությունների առնչությամբ, բայց Աստծու հավատարմությունը մեր բնական հասկացողության համաձայն չէ. Ա Կրթ 1:9-ն ասում է, որ Աստված հավատարիմ է մեզ Իր Որդու հաղորդակցության մեջ կանչելու առնչությամբ, բայց մեր բնական հասկացողության համաձայն գուցե թվա, թե Նա հավատարիմ չէ մեր բարեկեցության համար հոգալու առնչությամբ:
3. «Նայեք Պողոս առաքյալի չարչարանքներին: Նա Աստծու կողմից կանչվել էր, հանձնարարություն ստացել, հոգս ուներ և ուղարկվել էր, բայց ուր էլ զնար, տհաճությունների էր բախվում: Օրինակ՝ հենց որ նա սկսեց Քրիստոս քարոզել, նա սկսեց հալածանք կրել: Նա նույնիսկ ստիպված եղավ Դամասկոսից փախչել՝ սակառի մեջ պարսպի վրայով իջեցվելով: Արդյո՞ք սա նշանակում է, թե Աստված Պողոսին հավատարիմ չէր. ո՛չ, սա նշանակում է, որ Աստծու հավատարմությունը մեր բնական հասկացողության համաձայն չէ» («Երեմիա մարգարեի գրքի կենասուսունասիրություն», ո. էջ 33) Գրծ 9:15-16, 23-25, Բ Կրթ 11:30-33, Կղու 1:24, Բ Կրթ 1:5, Փլա 3:10, Հյու 1:9, Բ Տմբ 2:10, 3:12:
4. Երբ մենք ներհավատացինք Տեր Հիսուսին, գուցե ակնկալիք ունեինք, թե արտաքին խաղաղություն և օրինություն կունենանք, բայց դրա փոխարեն հնարավոր է՝ բազում դժվարություններ ունեցանք և կորցրինք մեր ապահովությունը, մեր առողջությունը կամ մեր ունեցվածքը. Երբ որոշ քրիստոնյաներ այսպիսի բաներ են փորձառարար ապրում, Աստծու հավատարմությունը հարցի տակ են դնում և հարցնում, թե ինչու Նա իրենց չպահեց նեղություններից՝ Գրծ 14:22, Ա Թսղ 3:2-5:
5. Մենք պետք է գիտակցենք, որ, թույլ տալով, որ մենք դժվարություններ ունենանք, Աստված հավատարիմ է Իր նպատակին, որպեսզի մեզ շրջի կուռքերից և վերադարձնի Իր մոտ. մեր խաղաղությունը, ապահովությունը, առողջությունը և ունեցվածքը կարող են մեզ համար կուռքեր դառնալ, բայց Աստված հավատարիմ է՝ այդ բաները հեռացնելու, որպեսզի մենք խմենք Իրենից՝ որպես կենդանի ջրերի ակունքից:
6. Օրինակ, եթե մեր տունը կամ ունեցվածքը մեզ համար դառնում են կուռքեր, մենք խմում ենք դրանցից և ոչ թե Աստծուց. Աստծու հավատարմությունը կապված է այս կուռքերին վերջ դնելու և մեզ Իրենից խմել տալու հետ՝ Սղմ 36:8:
7. Աստված հավատարիմ է մեզ դեպի Իր տնտեսության մեջ առաջնորդելու (Ա Կրթ 1:9, Ա Թսղ 5:23-24), և Իր տնտեսությունն այն է,

որ մենք խմենք Քրիստոսին, ուտենք Քրիստոսին, վայելենք Քրիստոսին, ներծծենք Քրիստոսին և յուրացնենք Քրիստոսին, որպեսզի Աստված մեր առնչությամբ Իր մեծացումն ունենա և իրագործի Իր տնտեսությունը:

8. Մենք պետք է տեսնենք, որ մենք Խրայելից ոչնչով ավելի լավը չենք. ամեն բան կարող է մեզ համար կուրք դառնալ, բայց Աստված հավատարիմ է Իր տնտեսությանը. Նա Իր հավատարմությամբ վերջ է դնում մեր կուրքերին, որպեսզի մենք խմենք Իրեն. բոլորս պետք է խմենք Աստծուց՝ որպես կենդանի ջրերի ակունքից, ընդունելով Քրիստոսին մեջ և յուրացնելով Նրան, որպեսզի Նա մեծանա՝ Աստծու տնտեսությունն իրագործելու և մեր՝ որպես Իր զույգի միջոցով Իր արտահայտությունն ունենալու համար՝ Հի 3:29-30:
  - թ. Եթե գիտակցենք, որ Աստծու հանդեպ անհավատարիմ ենք եղել, գուցե ապաշխարենք ու լաց լինենք, բայց այդժամ պետք է սկսենք խմել կենդանի ջրերից՝ փառարանելով Աստծուն, ամեն ինչի համար Նրան գոհարանելով ու վայելելով Նրան (Ա Թաղ 5:16-18). Աստծուն ուրիշ ոչինչ չի հետաքրքրում՝ բացի այն բանից, որ մենք Քրիստոսին վայելենք.
    1. Մենք կարող ենք կարծել, թե մեր ձախողման պատճառով մենք անհոյս ենք. անկասկած, Խրայելի ժողովրդին թվում եր, թե Աստված իրենցից հրաժարվել է, և որ իրենց վերջը եկել է, բայց Աստծու կարեկցանքները չեն վերջանում. ընդհակառակը, դրանք ամեն առավոտ նոր են՝ Ողբ 3:22-23:
    2. Երեմիան նույնիսկ կարողացավ ազդարաբել, որ Եհովան իր բաժինն է, և որ Նրա վրա էր իր հույսը, որովհետև Նա բարի է նրանց հանդեպ, ովքեր Իրեն են սպասում. Աստծու հոյս կա, որովհետև Աստված երբեք չի հիասքափեցնում՝ խիս. 24-25, հմնտ Սղմ 16:5, 73:25-26:
    3. Մեր ձախողումը Քրիստոսի համար ճանապարհ է բաց անում՝ գալու և մեր արդարությունը, մեր փրկագնումը լինելու, ինչպես նաև Իրեն մեր մեջ բաշխելու համար, որպեսզի լինի մեր կյանքն ու կյանքի օրենքը՝ դրա՝ Աստծուն ճանաչելու և Աստծուն ապրելու ունակությամբ հանդերձ. այլ կերպ ասած՝ մեր ձախողումը պարզապես պատրաստում և բաց է անում այն ճանապարհը, որով Քրիստոսը գալիս է, որպեսզի մեծարվի մեջ մեջ ու մեր միջոցով՝ լինելու համար մեր կենտրոնականությունը և տիեզերականությունը՝ Երմ 23:5-6, 31:33-34, Կղս 1:17թ, 18թ:
    4. Եթե այսօր Աստծու սպասելիքները չենք արդարացնում, չպետք է հիասքափենք. Աստված մեզ կա՞մ որպես Իր հաղթող հարսին հաջորդ դարաշրջանում, կա՞մ որպես Իր կնոջը հավիտենությունում ներգործության ենթարկելու, հասունանալ տալու և Նոր Երուսաղեմը դարձնելու ճանապարհ ունի՝ Եբբ 6:1ա:
    5. Կարիք չկա, որ մեր իրավիճակի համար անհանգստանանք. Աստված համբերատար է, խղճացող ու կարեկցող, ու Նա ժամանակ կհատկացնի մեզ հասունացնելու.
      - ա. Ամեն հավատացյալ, անկախ այն բանից՝ այս պահին տկար է, թե ուժեղ, լինելու է Նոր Երուսաղեմի բաղկացուցիչը, իսկ այնտեղ յուրաքանչյուր ոք հասուն է լինելու՝ Հյտ 19:7-9, 21:2:

- p. Հետևաբար մենք չպետք է վախենանք կամ հիասթափիվենք. ընդհակառակը, պետք է քաջալերվենք ու մխիթարվենք ամեն մխիթարության ու քաջալերանքի Աստծով՝ Բ Կրթ 1:3-4, Հոմ 15:5:
- q. Մենք պետք է Աստծու, ով կենդանի ջրերի ակունքն է, ճշմարիտ երկրպագուները լինենք՝ խմելով Նրան, որպեսզի Նա կարողանա մեր ներսի իրականությունը լինել, որն ի վերջո դառնում է մեր իսկությունը և անկեղծությունը, որով երկրպագում ենք Աստծուն այն երկրպագությամբ, որը Նա փնտրում է՝ Հվի 4:23-24: